Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

-420-

# ՀԱՄ. Կ. (Բ.) Կ. Կ. Կ.
# ՍԵՊՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

ԿՈՒՍՀՐԱՏ 1932 ԵՐԵՎԱՆ

- 420 -

11 NOV 2017

# ՀԱՄ. Կ. (Բ.) Կ. Կ. Կ.
# ՍԵՊՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ
# ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

ՀԱԽՀ ԿԵՆՏՐ. ԱՐԽԻՎ ԳՐԱԴԱՐԱՆ

ԿՈՒՍՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

(ԸՆԿ. ԸՆԿ. ԶԵԼԵՆՍԿՈՒ, ՄԻԿՈՅԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՑԵԼՈՎԻՉԻ ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ 1932 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԲԱՆԱՁԵՎԸ)

*Լսելով ԽՍՀՄ Մատժողկոմատի և Ցենտրոսայուզի զեկուցումները և ԿՎՀ ԲԳՏ-ի հարակից զեկուցումը խորհրդային առևտրի զարգացման վերաբերյալ Համ Կ(բ)Կ Կենտկոմի վորոշման կատարման մասին, Համ Կ(բ)Կ Կենտկոմի պլենումը նշում է.—*

*1. Կենտկոմի վորոշումն իրագործելու և մանրածախ առևտրի ցանցն ուժեղացնելու և ծավալելու համար ԽՍՀՄ Մատժողկոմատը 1932 թ. ընթացքում բաց է արել 7·100 խանութ, վորոնցից շրջանների քաղաքային վայրերում 2·800 խանութ, գյուղերում — 4·080, այդ ժամանակամիջոցում բացված են 590 նոր կրպակներ և վրան-խանութներ: Մատժողկոմատի պետառևտրի մանրածախի ցանցն 1932 թ. 7 ամիսների ընթացքում աճել է 67 տոկոսով և հասել է 26·300 խանութի ու 9 հազար վրան-խանութի և կրպակի:*

*Ցենտրոսայուզի կողմից 1932 թվի ընթացքում բացվել է 13·100 խանութ, վորից 5400-ը քաղաքներում և 7·700-ը գյուղերում. կրպակներ և վրան-խանութներ բացված են 22·500: Սպառկոոպերացիայի մանրածախի ցանցն ընթացիկ տարում աճել է 20 տոկոսով՝ կազմելով 167·700 խանութ և 49·700 կրպակ և վրան-խանութ:*

*2. Ի կատարումն Կենտկոմի վորոշման՝ ծավալվել է Մատժողկոմատի արդյունաբերական միավորումների մեծածախ առևտրի բազաների ցանցը, վորոնց թվում նաև հեռավոր յերկրամասերում և մարզերում: Մայիսի մեկից մինչև սեպտեմբերի մեկը բացված է 635 մարզային մեծածախ բազա, վորոնց թվում՝ Հեռավոր Արևելքում՝ 14, Արև-*

1-3053 դր

վելյան Սիբիրում՝ 6, Արևմտյան Սիբիրում՝ 27, Միջին Ասիայում՝ 23, Կազակստանում՝ 26:

Մատժողկոմատի պետառևտրի և սպառկոոպերացիայի կողմից ծավալված և միջշրջանային առևտրական բազաների ցանցը — Մատժողկոմատի գծով 74 միավոր, իսկ Ցենտրոսոյուզի գծով — 288 միավոր: Բացի դրանից Ցենտրոսոյուզը բաց է արել 38 մարզային բազաներ:

Մատժողկոմատի արդյունաբերության, կոոպերացիայի և պետառևտրի կողմից մեծածախ բազաների նշանակալից ծավալման հետ միասին արդյունաբերական և առևտրական կազմակերպությունների բազաների մեծ մասը դեռևս շարունակում է մնալ վորպես պահեստային առաքման կետեր, վորոնք շատ անգամ ապրանքները բաշխում են մեխանիկորեն, գործադրում են հարկադրական ասորտիմենտ, սպասարկում են իրենց գերատեսչական մանրածախ առևտուրը, ի վնաս ուրիշ առևտուր անող սիստեմների:

Կան դրական փաստեր, օրինակ՝ Մոսկվայում, Լենինգրադում ու այլ քաղաքներում, յերբ հրուշակային, ծխախոտի, մարգարինի և պահածոների ֆաբրիկաները ապրանքն անմիջապես բաց են թողել իրենց քաղաքների առևտրական ցանցին, պանց առնելով բազաները: Դրանց հետ միասին վորոշ դեպքերում այն ապրանքները, վորոնք կարող եյին անմիջապես հանձնվել մանրածախ առևտրին, ուղարկվում են բազաները:

Այդ հանգամանքը, ինչպես և արդյունաբերության և առևտրական սիստեմների բազաների անբավարար բաշխումը առանձին ռայոններում, առաջ են բերում ապրանքի շարժման արգելակող հանդիպական փոխադրումներ:

3. Առևտրական ցանցի աճման մեջ, ապրանքաշրջանառության արագացման մեջ, առևտրական ապարատի աշխատանքում՝ մինչև այժմ դեռ չեն վերացվել Կենտկոմի մի շարք վորոշումներում նշված խոշորագույն թերությունները, այդ մասին են վկայում այն փաստերը, յերբ ապրանքների մեքենայական բաշխման և առանց առանձին ռայոնների պահանջները հաշվի առնելու ապրանք ուղարկելու հետևանքով մի տեղ ապրանքը կուտակվում է, յերբ մի այլ տեղում այդ ապրանքների պակասն է զգացվում, ապրանքաշրջանառության քնեցման փաստերը, հարկադրիչ ասորտի-



մենտի գործադրումը, վերջին ժամանակներս գների պետական քաղաքականության կիրառման դիսցիպլինայի թուլացումը և այդ քաղաքականության ուղղակի աղավաղման փաստերը, շրջանառության ծախսերի ավելանալը, հատկապես ավելորդ առևտրական ներկայացուցչությունների և լիազորությունների ապարատի ուռճացումը, չարաշահության և հափշտակության դեպքերն առևտրական ապարատում, վորոնք ցույց են տալիս առևտրական ապարատի կադրերի անբավարար ստուգումը և խորթ տարրերի թափանցումը նրա մեջ:

4. Ի կատարումն ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշման՝ արդյունաբերական ապրանքների շուկայական ֆոնդը, հատկապես գյուղի համար, ի հաշիվ վոչ շուկայական սպառման ֆոնդի ընդարձակելու վերաբերյալ, և վոչ շուկայական սպառման ֆոնդերը կրճատելու վերաբերյալ. ի կատարումն Կենտկոմի վորոշման վոչ շուկայական սպառողների համար ապրանքների առաջնահերթ փոխադրման արտոնյալ կարգը վերացնելու մասին, վերջին յերեք ամսվա ընթացքում (սկսած մայիս—հունիսից) ապրանքների առաքման պրակտիկան փոփոխված է հօգուտ շուկայական, հատկապես գյուղական սպառողի:

Կենտկոմի վորոշումը՝ գյուղն 1500 միլ. ռ. արդյունաբերական ապրանք ուղարկելու նախնական պլանը փոփոխելու և 1800 միլիոն ռուբլու հասցնելու մասին, վորն առաջին կիսամյակում թույլ եր կատարվում, հետագա ամիսներին այնպիսի թափ ստացավ, վորն ապահովում է գյուղն ապրանք ուղարկելու մասին Կենտկոմի տարեկան առաջադրանքի կատարումը: Ըստ վորում պետք է նշել, վոր ռայոններն ապրանք ուղարկվում է անժամանակ և անբավարար կերպով են հաշվի առնվում առանձին ռայոնների տնտեսական առանձնահատկությունները: Հակառակ Կենտկոմի վորոշման՝ 1932 թվի գյուղատնտեսական մթերումներն ապահովելու համար բրոնիայի յենթարկված արդյունաբերական ապրանքների ֆոնդը խիստ անբավարար է կրճատված:

Առևտրական օրգանների, մանավանդ կոոպերացիայի, առավելապես գյուղի կոոպերացիայի պրակտիկայում հաճախ տեղական կուսակցական ու խորհրդային օրգանների ուղղակի ցուցումով ինքնագլուխ կերպով բրոնիայի յեն

ենթարկում ապրանքները և ցուցակով բաշխում են սպառողների զանազան խմբակների (վորոնց թվում նաև կոլտնտեսությունների) միջև, փոխանակ վաճառելու այդ ապրանքները խանութներում՝ նորմալ ապրանքաշրջանառության կարգով:

Խորհրդային առևտուրն էլ ավելի զարգացնելու և վերոհիշյալ թերությունները վերացնելու նպատակով, Կենտկոմի պլենումը վորոշում է՝

1. Քաղաքային առևտրական ցանցի զարգացումն այսուհետև կենտրոնացնել բանվորական շրջաններում և նոր շինարարություններում, նախատեսելով 1933 թվականի ժողովրդական տնտեսության պլանում առևտրական նոր շենքերի կառուցումը:

Զգալի չափով ընդարձակել գյուղական ցանցը, առաջարկելով Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդին կից ապրանքային ֆոնդերի կոմիտեյին՝ մի ամսում մշակել համապատասխան պլան, վորի համաձայն Ցենտրոսայուզը և Մատժողկոմատը 1933 թվականին ծավալելու յեն առևտրական ցանցը գյուղում:

2. Առաջարկել Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդին կից ապրանքային ֆոնդերի կոմիտեյին՝ մի ամսում քննել և հաստատել արդյունաբերության մարզային մեծաքանակ առևտրի բազաների և պետառևտրի ու սպառկոոպերացիայի միջշրջանային բազաների բաշխումը, ինչպես և ապրանքն ամենաարագ թափով, ավելորդ ողակները զանց առնելով, արտադրողից սպառողին հասցնելու կարգը, նախատեսելով հանդիպական փոխադրումների վերացումը, արդյունաբերության ու ապրանքատար սիստեմների մեծաքանակ առևտրի զուգահեռ բազաների վերացումը:

Առաջարկել Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդին՝ ամենակարճ ժամանակամիջոցում վճռական միջոցներ ձեռք առնել արագացնելու լայն սպառման ապրանքների փոխադրումը յերկաթուղիներով ու ջրային ուղիներով, ավելի արագ քննելու ապրանք սպառողների պահանջների բավարարման հարցը:

3. Նկատի առնելով, վոր մեծաքանակ ապրանքի բազաների ու լայն ցանցի գոյությունը հնարավորություն է տալիս կոոպերացիայի ստորին ողակներին իրականացնել նախ-



նական պատվերների սիստեմը, Համ.Կ(բ)Կ Կենտկոմի պլենումն առաջարկում է Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդին կից ապրանքային ֆոնդերի կոմիտեյին՝ մշակել և 1933 թվականի հունվարի մեկից իրականացնել պետառևտրի ու կոոպերացիայի նախնական պատվերների սիստեմը, ընդգրկելով դրանով լայն սպառման ապրանքները (կտորեղեն, վոտնաման, հագուստ և այլն):

Միևնույն ժամանակ ՀամԿ(բ)Կ Կենտկոմն առաջարկում է արտադրական ժողկոմատներին և Ցենտրոսայուզին՝ վերջնականապես ապահովել առևտուր անող ստորին կազմակերպությունների համար ապրանքի ընտրումը բազաներում:

Վորակի համար մղվող պայքարն ապահովելու նպատակով, մտցնել ապրանքի պարտադիր նշանումը: Առաջարկել արդյունաբերության օրգաններին՝ առևտուր անող կազմակերպություններից հետ ընդունել և փոխարինել վատորակ ապրանքը:

4. Առաջարկել Մատժողկոմատին, Ցենտրոսայուզին և առևտուր անող բոլոր կազմակերպություններին՝ վճռաբար նվազեցնել վերջին ժամանակներս մեծացած առևտրական-վարչական ծախսերը:

5. Առաջարկել Մատժողկոմատին, Ցենտրոսայուզին, Անտառարդյունաբերության, Ծանր Արդյունաբերության, Թեթև Արդյունաբերության ժողկոմատներին, ինչպես և առևտուր անող բոլոր կազմակերպություններին, կուսակցական ու խորհրդային տեղական օրգաններին՝ խստիվ պահպանել այն կարգը, վորով պետք է գերադասություն տրվի լայն շուկայի ու նախ և առաջ գյուղի համար արդյունաբերական ապրանք ուղարկելու պլաններին և դրանք պետք է կատարվեն առաջին հերթին, թույլ չտալով, վոր գյուղական ապրանքային ֆոնդերը պառկած մնան քաղաքներում, շրջանային կենտրոններում և առևտրական ապարատներում:

6. Անբավարար համարելով կոլտնտեսական առևտրի զարգացման ասպարեզում ձեռք բերված հաջողությունները, Կենտկոմն առաջարկում է տեղական կուսակցական ու խորհրդային կազմակերպություններին՝ էլ ավելի զարկ տալ կոլտնտեսական առևտրին (ներգրավել առևտրի ասպարեզն ավելի մեծ թվով կոլտնտեսություններ, կոլտնտեսականներ

և մենատնտես աշխատավոր գյուղացիներ, ընդարձակել կոլտնտեսական առևտրական ցանցը, բարելավել արդյունաբերական ապրանքների հանդիպական առևտրի կազմակերպումը, ուժեղացնել տնայնագործական, արհեստագործական կոոպերացիայի արտադրանքի առևտուրը), վճռաբար արմատախիլ անելով սպեկուլյանտներին ու առևտրականներին, հեռացնելով շուկայից պետական ու կոոպերատիվ մթերող այն կազմակերպություններին, վորոնք ուռցնում են գները, նպաստում են սպեկուլյանտներին, վորպեսզի այդ բոլոր ձեռնարկումներով իջեցվեն կոլտնտեսական շուկայում գոյություն ունեցող չափազանց բարձր գները:

7. Մատնանշելով, վոր անբավարար են և չեն կարգավորված գյուղատնտեսական ապրանքների ապակենտրոնացված այն մթերումները, վորոնք կատարում են սպառկոոպերացիան, հանրային սնունդը և պետական առևտրական կազմակերպությունները, Կենտկոմի պլենումն առաջարկում է տեղական կուսակցական ու խորհրդային կազմակերպություններին, Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդին կից մթերման կոմիտեյին, Մատժողկոմատին, Ցենտրոսայուզին.

ա) Ծավալել գյուղատնտեսական ապրանքների մթերումը պետական ու կոոպերատիվ մթերող կազմակերպությունների կողմից, մանավանդ հեռավոր շրջաններում, համապատասխան կերպով վերակառուցելով նրանց աշխատանքը:

բ) Վճռաբար բարելավել Յերկրային Գործադիր Կոմիտեների ղեկավարությունը կոնվենցիոն բյուրոների աշխատանքի նկատմամբ, դարձնելով կոնվենցիոն բյուրոները գների խորհրդային քաղաքականության համար մթերման շուկայում գների սպեկուլյատիվ բարձրացման դեմ պայքարելու իրական որգաններ:

գ) Ստեղծել առանձնապես նպաստավոր պայմաններ բանվորական փակ կոոպերատիվների, խոշոր գործարանների ճաշարանների մթերման աշխատանքի համար, խրախուսելով բանվորական փակ կոոպերացիաների ու կոլտնտեսությունների և գյուղական սպառկոոպի տևական պայմանագրերի սիստեմը:

դ) Ամրացնել ստորին մթերող ապարատը, կազմակերպելով մթերող գործակալների, հավաքողների և փոխա-



դրողների խնամքով ընտրությունը, ուժեղացնելով նրանց նյութական շահագրգռվածությունը մթերումների նկատմամբ, ապահովելով գյուղխորհուրդների ու կոլտնտվարչությունների համապատասխան ոգնությունը նրանց:

8. Քաղաքի ազգաբնակչությանը սննդամթերք մատակարարելու գործի հետագա բարելավումը պետք է ընթանա կենտրոնացված մթերումների պլանների լրիվ կատարման հետ միասին, կոնվենցիոն գներով գյուղատնտեսական մթերքների պետական գնումներ կազմակերպելու գծով՝ գլխավորապես ծավալելով կոոպերացիայի և առևտրական այլ կազմակերպությունների ապակենտրոնացված մթերումները, զարգացնելով կոլտնտեսական շուկաները, ստեղծելով գործարաններում և այլ ձեռնարկություններում սեփական պարենավորման լայն բազաներ (բանջարանոցներ, կաթնատնտեսություն, խոզաբուծարաններ, ճագարաբուծարաններ, թռչնաբուծություն, լճային տնտեսություն և այլն):

Ներկա պայմաններում գործարանների, տրանսպորտի և այլ ձեռնարկությունների խնդիրն է՝ ունենալ վոչ միայն կոոպերատիվ և ճաշարան, այլև գյուղատնտեսական ձեռնարկություն, վորը լրացուցիչ պարենամթերք է տալու՝ բանվորներին մատակարարելու համար:

Դրա համաձայն, անհրաժեշտ է էլ ավելի ծավալել ճաշարանների, խոհանոց-գործարանների և հացագործարանների շինարարությունը:

9. Գյուղական սպառկոոպը, վորը հանդիսանում է գյուղին ապրանք հայթայթելու ցանցի հիմնական ողակը, կազմակերպչորեն ու տնտեսապես ամրացնելու համար, Կենտկոմի պլենումն առաջարկում է ամրացնել գյուղական սպառկոոպի վարչության ընտրականությունը և նրա հաշվետվությունը՝ ավելացած ապրանքի համար, բարելավել աշխատողների նյութական ու կենցաղային պայմանները, գյուղական սպառկոոպի տրամադրության տակ թողնել նրանց հավաքած փայավճարների կեսից վոչ պակասը, ամենորյա կանխիկ հասույթների վոչ պակաս 20 տոկոսը՝ իրենց համար մթերումներ կատարելու նպատակով: Հանձնարարել յերկրային սպառկոոպմիություններին՝ վճռաբար ուժեղացնել իրենց ուշադրությունը դեպի գյուղական սպառկոոպի ցանցի աշխատանքը, ծավալելով կազմակերպչական-մասսա-

յական աշխատանք և ստեղծելով դրա համար հրահանգչական ամուր կադրեր:

10. Անհրաժեշտ համարելով ամրացնել սպառկոոպերացիայի տնտեսությունը՝ առաջին հերթին կրճատելով վարչական չափազանց մեծ ծախսերը, մոբիլիզացիայի յենթարկելով ներքին ռեսուրսները և ստեղծելով սեփական նորմալ կուտակումներ, ինչպես և վճռաբար կրճատելով միջոցների վերցնելը սպառկոոպերացիայից, Կենտկոմի պլենումն առաջարկում է Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդին, սույն վորոշման համաձայն, վերանայել Ցենտրոսոյուզի ֆինանսական պարտավորությունները:

11. Կենտկոմի պլենումը միանգամայն անթույլատրելի յե համարում կուսակցության միքանի անդամների և առանձին կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների վերաբերմունքը դեպի առևտրական աշխատանքը, վորպես յերկրորդական մի աշխատանք, վորը պակաս կարևորություն ունի քան տնտեսական, արհմիութենական և խորհրդային այլ կազմակերպությունների աշխատանքը:

Կենտկոմն առաջարկում է Ցենտրոսոյուզին, Առժողկոմատին, պետառևտրի ու կոոպերացիայի աշխատողների արհմիության Կենտրոնական Կոմիտեյին և տեղական կուսակցական կազմակերպություններին՝

ա) սիստեմատիկաբար լրացնել առևտրական ապարատը ստուգված կոմունիստներով ու կոմյերիտականներով,

բ) վճռաբար վերացնել առևտրական ապարատի ղեկավար ու շարքային աշխատողների հոսունությունը,

գ) բարելավել նրանց նյութական դրությունը, կառուցելով առևտրական աշխատողների աշխատավարձը շրջանառության չափի համեմատ և հավելումներ սահմանել աշխատավարձի վրա՝ միևնույն առևտրական ձեռնարկության մեջ կատարված յերկարատև ու բարեխիղճ աշխատանքի համար,

դ) ուժեղացնել կուսակցական մասսայական և արհմիութենական աշխատանքն առևտրի աշխատողների մեջ:

12. Խորհրդային առևտրի ծավալման պայմաններում հատուկ նշանակություն է ստանում կուսակցության այն ցուցումը թե՝ կոոպերացիայի աշխատանքում կա ինչ-վոր նեպմանական վոգի: Արմատախիլ անել նեպմանական վոգու ամեն տեսակ արտահայտությունները, վճռաբար պայքար



մղել գները սպեկուլյատիվ կերպով բարձրացնելու դեմ, չափանումների դեմ, վճռաբար պայքար մղել ինքնամատակարարման, մանավանդ առևտրական ապարատում կատարվող յուրացումների դեմ—այս բոլորն այժմ հանդիսանում է կուսակցական ու խորհրդային կազմակերպությունների հիմնական խնդիրներից մեկը:

13. Կենտկոմի պլենումը տեղական ԲԳՏ-ների առջև դնում է հիմնական խնդիրներ՝ ամենորյա ոգնություն ցույց տալ առևտրական կազմակերպություններին և վերահսկիչ օրգաններին՝ խորհրդային առևտրի զարգացմանը վերաբերյալ Կենտկոմի վորոշումը կատարելու ասպարեզում:

Ծանր արդյունաբերության հզոր զարգացումը և սոցիալիստական գյուղատնտեսության արտադրանքի ավելանալը հնարավոր դարձրին արագորեն ծավալել թեթև ու սննդի արդյունաբերությունը, ընդարձակել լայն սպառման առարկաների արտադրությունը, վորը սակայն դեռևս քիչ է աշխատավորների մեծացած պահանջներին բավարարելու համար: Կենտկոմի պլենումը գտնում է, վոր լայն սպառման ապրանքների արտադրության ըստ ամենայնի ուժեղացումը՝ թե թեթև ու սննդի արդյունաբերության, և թե ծանր արդյունաբերության ու տնայնագործական—արհեստագործական կոոպերացիայի ճյուղերում, ներկայումս հանդիսանում է տնտեսական, քաղաքական կարևորագույն խնդիրներից մեկը: Բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքն է՛լ ավելի ամրացնելու շահերը, քաղաքի ու գյուղի աշխատավորների նյութական դրությունը բարելավելու շահերը պահանջում են ըստ ամենայնի ծավալել խորհրդային առևտուրը, մանավորապես կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտես գյուղացիների առևտուրը:

Կենտկոմի պլենումը պահանջում է վճռական դիմադրություն ցույց տալ խորհրդային առևտրի նշանակության հակակուսակցական «ձախ» թերագնահատմանը և մատնանշում է, վոր աջ ոպորտունիզմի դեմ մղվող պայքարում կուսակցության ձեռք բերած հաղթանակը, քաղաքի ու գյուղի միջև սոցիալիստական արտադրական զոդում կազմակերպելու գործում նրա ձեռք բերած հաջողությունները վոչ միայն չեն վերացնում, այլև առանձնապես ուժգին կերպով

առաջադրում են քաղաքի ու գյուղի առևտրական զոդումն այդ բազայի վրա ամրացնելու խնդիրը:

Այդ կապակցությամբ, հատուկ նշանակություն ունեն Կենտկոմի Քաղբյուրոյի վորոշման հիման վրա կիրառվող այն ձեռնարկումները, վորոնց նպատակն է ավելացնել լայն սպառման առարկաների շուկայական ֆոնդը, ուժեղացնել և ծավալել լայն սպառման առարկաների արտադրումն ամբողջ արդյունաբերության կողմից, վճռաբար սահմանափակել դերատեսչական սպառումը հոգուտ լայն շուկայի, ծավալել ապրանքաշրջանառությունը:

Կենտկոմի պլենումը մատնանշում է, վոր խորհրդային առևտրի, մասնավորապես կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտես գյուղացիների առևտրի ծավալումը վոչ միայն չի նշանակում արձակել շուկայական տարերքի սանձը, շուկա թողնել նեպմանին ու սպեկուլյանտին, ինչպես փորձում են մեկնաբանել աջ ոպորտունիստական և կուլակային տարրերը, այլ ընդհակառակը, պահանջում «արմատախիլ անել մասնավոր առևտրականներին և սպեկուլյանտներին, վորոնք փորձում են փող շահել կոլտնտեսական առևտրում»:

Կենտկոմի պլենումը պարտավորեցնում է կուսակցական, տնտեսական և արհմիութենական բոլոր կազմակերպություններին՝ անողոք հակահարված տալ մի կողմից խորհրդային առևտրի նշանակության «ձախ», հակալենինյան թերագնահատմանը և մյուս կողմից խորհրդային առևտրի ծավալման խնդիրների լիբերալ-բուրժուական մեկնաբանությանը, վոր տալիս են աջ ոպորտունիստները:

Կենտկոմի պլենումն առաջարկում է վճռական պայքար ծավալել ընդհանրապես սպեկուլյացիան արմատախիլ անելու համար, մասնավորապես առևտրական ապարատի սպեկուլյանտական տարրերի դեմ և դրանով իսկ ապահովել խորհրդային առևտրի կանոնավոր զարգացումը՝ բանվորների ու գյուղացիների մատակարարումը բարելավելու համար:

---



# ԼԱՅՆ ՍՊԱՌՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ 32 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԲԱՆԱՁԵՎԸ ԸՆԿ. ԸՆԿ. ՊՅԱՏԱԿՈՎԻ, ԼՅՈՒԲԻՄՈՎԻ ՅԵՎ ՎԱՍԻԼԵՎՍԿՈՒ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՑՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԸՆԿ. ԱՆՏԻՊՈՎԻ ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ԱՌԹԻՎ)

## I

ՀամԿ(բ)Կ Կենտկոմն իր վորոշումներում անհրաժեշտ գտավ վճռաբար ավելացնել լայն սպառման առարկաների հայթայթումը ազգաբնակության, ընդարձակելով լայն սպառման ապրանքների արտադրությունը, արագացնելով և ավելացնելով ապրանքաշրջանառությունը, կրճատելով այդ ապրանքների արտաշուկայական սպառումը, նվազեցնելով անցյալում տեղի ունեցող այն դեպքերը, յերբ զգալի քանակությամբ լայն սպառման ապրանքներ աննպատակահարմար կերպով մնում էյին պետական կազմակերպությունների ապրանքատար ցանցում:

Կենտկոմի այդ վորոշումների համաձայն, արտադրական բոլոր ժողկոմատները և տնայնագործական-արհեստագործական կոոպերացիան ավելացրել էյին լայն սպառման առարկաների արտադրության 1932 թվականի ծրագիրը, կոնկրետաբար, ըստ ոբյեկտների, կրճատվել էր լայն սպառման առարկաների արտաշուկայական սպառումը, վորոշվել էր ձեռնարկություններին կից կազմակերպել ուտիլցեխեր՝ արտադրության մնացորդները լայն սպառման լրացուցիչ առարկաներ արտադրելու համար ոգտագործելու նպատակով, ծանր արդյունաբերության սիստեմում կազմակերպված է լայն սպառման առարկաների հատուկ սեկտոր, պլանների կատարման նյութական ռեսուրսների մեջ մտցվում է լայն սպառման առարկաների արտադրության հատուկ հաշվառում և այլն:

Կենտկոմի այդ վորոշումները, վորոնց նպատակն է ել ավելի բարելավել բանվորների ու գյուղացիների նյութական դրությունը, ամրացնել քաղաքի ու գյուղի զոդումը, կուսակցության բոլոր կազմակերպությունների առջև, տնտեսական բոլոր որգանների առջև դրեցին մի խնդիր, վորը քաղաքական առաջնակարգ նշանակություն ունի:

## II

Մինչդեռ Թեթև Արդյունաբերության Ժողկոմատը, Ծանր Արդյունաբերության Ժողկոմատը և արհեստակցական կոոպերացիան մինչև այժմ էլ անբավարար չափով են կենսագործում Կենտկոմի այդ վորոշումները:

### 1. ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ.

Լայն սպառման առարկաների արտադրական ծրագիրն 8 ամսում կատարվել է ընդամենը 50,4 տոկոսով, ընդ վորում վատացել է ծրագրի կատարումը վերջին յերկու ամսում՝ հուլիսին և օգոստոսին (տարվա առաջին վեց ամսում պլանը կատարվել էր 90 տոկոսով):

Հիմնական ճյուղերում ծրագիրը կատարվել է՝ բամբակեղենի արդյունաբերության մեջ 90,7 տոկոսով, բրդի արդյունաբերության մեջ 100,2 տոկոսով, տրիկոտաժի արտադրության մեջ՝ 93 տոկոսով, ապակեղենի արտադրության մեջ՝ 72,4 տոկոսով, հախճապակու արտադրության մեջ՝ 84,2 տոկոսով, կաշվեղենի ու վոտնամանների արտադրության մեջ՝ 82,1 տոկ.: Այդ պատճառով, թեպետ առաջին կիսամյակում շուկա յե հանվել 28,5 տոկոսով ավելի ապրանք՝ քան 1931 թվականի առաջին կիսամյակին, այնուամենայնիվ ծրագրերը մեծ չափով թերակատարվել են՝ համեմատած ապրանքամատակարարման 1932 թվականի պլանի հետ. արտադրանքի վորակը մնում է ցածր մակարդակի վրա, ունենալով միաժամանակ խոտանի բարձր տոկոս:

### 2. ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ՝

ա) Լայն շուկայի համար մետաղի արտադրանքը կազմում է 474 միլիոն ռուբլի, վորից 8 ամսվա ընթացքում կատարվել է 215 միլիոն ռուբլու արտադրանք կամ ութ ամսվա արտադրանքի 81 տոկոսը:

բ) Ռետինի արդյունաբերությունը՝ լայն շուկայի տարեկան արտադրանքն է 243 միլիոն ռուբլի, վորից ութ ամսում կատարվել է 131 միլիոն ռուբլու արտադրանք կամ ութ ամսվա արտադրանքի 94 տոկոսը:

գ) Տեխնիկական կտորեղեն (կլեոնկա և այլն)՝ լայն



շուկայի տարեկան արտադրանքն է 29,8 միլիոն ռուբլի, վորից ութ ամսում կատարվել է 16.4 միլիոն ռուբլու արտադրանք կամ 8 ամսվա արտադրանքի 80 տոկոսը:

դ) Կերոսին՝ լայն շուկայի տարեկան արտադրանքն է 1800 հազար տոնն, վորից ութ ամսում մատակարարվել է 885 հազար տոնն կերոսին և այսուհետև ևս մատակարարվելու յե լրիվ չափով՝ համաձայն սպառկոոպերացիայի պահանջին:

յե) Հուլիսին և օգոստոսին զգալի չափով վատացավ ծրագրի կատարումը, վորն ուղղակի սպառնալիք է տարեկան պլանի կատարմանը:

զ) Քանակական ծրագրի անբավարար կատարման հետ միասին չափազանց ցածր է ապրանքի վորակը՝ սպառողական հատկությունների տեսակետից, սխալ է օգտագործվել հումքը թե՛ վորակի և թե՛ քանակի կողմից, սահմանափակ և միատիպ են յեղել տեսակները և չեն համապատասխանում շուկայի պահանջներին:

### 3. ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԳԾՈՎ՝

Լայն սպառման առարկաների արտադրության 1932 թ. առաջին կիսամյակի պլանը կատարվել է 93,3 տոկ., սակայն արտադրական ձեռնարկությունները մինչև այժմ էլ չափազանց թույլ նախաձեռնություն են ցուցաբերում, մանավանդ հումքի տեղական տեսակներն օգտագործելու ասպարեզում: Վորակն անբավարար է, մանավորապես ապրանքների տեսակները սահմանելիս քիչ են նկատի առնվում գյուղի պահանջները:

## III

Հիմնական այն պատճառները, վորոնց հետևանքով անցյալ շրջանում թույլ են կատարվել լայն սպառման առարկաների արտադրության չափին վերաբերյալ Կենտկոմի վորոշումները, հետևյալներն են՝

1. Տնտեսական կազմակերպությունների կողմից ժողովրդական տնտեսության զարգացման համար լայն սպառման առարկաների արտադրության հսկայական նշանակության թերագնահատումը, վորը մինչև այժմ էլ չի վերացված:

2. Արտադրության անբավարար կազմակերպումը և նրա վոչ բավականաչափ կոնկրետ ղեկավարումը:

3. Աշխատանքի անբավարար կազմակերպումը, գլխավոր պրոֆեսիաների սխալ տարիֆիկացիան, թեթև արդյունաբերության բանվորների կենցաղային պահանջների անբավարար սպասարկումը, աշխատանքային կարգապահության անկումը ձեռնարկություններում և աշխատանքի ցածր արտադրականությունը:

4. Հումքի առանձին տեսակների պակասության հետ միասին հումքի գերծախսումը՝ համեմատած սահմանված նորմաների հետ:

5. Արտադրության ավելցուկների, թափթփուկների մեծ քանակը, մատերիալի չափազանց նվազումն արտադրության պրոցեսում և մնացորդների ու թափթփուկների անբավարար օգտագործումը:

6. Սուրրոգատների և հումքի նոր տեսակների վոչ բավականաչափ արագ արմատացումը:

7. Տեղական հումքային ռեսուրսների չափազանց անբավարար օգտագործումն արհեստագործական կոոպերացիայի կողմից, տեղարդյունաբերության քաղաքի ու գյուղի ձեռնարկությունների ավելցուկների ու խոտանի մթերման թույլ ծավալումը:

8. Մի շարք տեղական կուսակցական, արհմիութենական և խորհրդային կազմակերպությունների վոչ բավականաչափ ուշադիր վերաբերմունքը լայն սպառման առարկաներ արտադրող ձեռնարկություններին և արհեստագործական կոոպերացիային, մասսայական արհմիութենական և կուսակցական թույլ աշխատանքը լայն սպառման ապրանքների արտադրության վերոհիշյալ թերությունները վերացնելու և պլանով սահմանված ծրագրերի կատարումն ապահովելու համար:

Համ. Կ(բ)Կ.-ի Կենտկոմը վորոշում է.

1. Առաջարկել Թեթև Արդյունաբերության Ժողկոմատին, Ծանր Արդյունաբերության Ժողկոմատին և արհեստագործական կոոպերացիային՝ վճռական բեկում ստեղծել լայն սպառման առարկաների արտադրության ասպարեզում թե՛ կենտրոնական ապարատներում և թե՛ արտադրական բոլոր ձեռնարկություններում, անձնական պատասխանատվություն դնելով տրեստների և ձեռնարկությունների վարչությունների վրա՝ լայն սպառման առարկաների արտադրության համար:



1-3053գ

2. Առաջարկել Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդին և Պետպլանին՝ տնտեսական պլաններում (տարեկան և քառամսյակային) նախատեսել լայն սպառման առարկաների արտադրության առանձնացրած հատուկ պլան՝ շաղկապված ամբողջ ժողովրդական տնտեսական պլանի հետ: Այդ նպատակով նախատեսել հումքի նպատակային հատուկ ֆոնդեր, լայն սպառման առարկաների արտադրության համար:

3. Առաջարկել Թեթև Արդյունաբերության Ժողկոմատին, Ծանր Արդյունաբերության Ժողկոմատին և արհեստագործական կոոպերացիայի համամիութենական կենտրոններին՝ ուժեղացնել լայն սպառման առարկաների արտադրության հաշվառման օրգանները. բոլոր ձեռնարկություններին և արտելներին ուղարկել հաշվառման միատեսակ ձևեր:

4. Առաջարկել մամուլի կենտրոնական ու տեղական բոլոր օրգաններին՝ սիստեմատիկաբար լուսաբանել լայն սպառման առարկաների արտադրության առաջադրանքների կատարման ընթացքը, լուսաբանելով առանձին ձեռնարկությունների ու արտելների կոնկրետ նվաճումները, պայքար մղելով արտադրական ծրագրերի կատարման համար:

## 5. ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ՝

ա) Առաջարկել Թեթև Արդյունաբերության Ժողկոմատին՝ ընդարձակել սուրրոգատների արտադրությունը, մտցնել հումքի նոր տեսակներ (կաշվի սուրրոգատ, կատոնին և այլն):

բ) Գյուղատնտեսական հումքի մթերման պլանի կատարումն ապահովելու նպատակով առաջարկել Ծանր Արդյունաբերության Ժողկոմատին և մթերող բոլոր կազմակերպություններին՝ առավելագույն չափով ուժեղացնել հումքի մթերումը: Այդ նպատակով, բացի կազմակերպչական միջոցներից, պրակտիկայի մեջ մտցնել համապատասխան ապրանքների (չոլլանավորվող ապրանքներ, ...-ցեխերի արտադրանքը և այլն) հանդիպական առևտուրը:

գ) Առաջարկել Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդին կից Մթերման Կոմիտեին՝ հանձնարարել արհեստագործական կոոպերացիային մթերումներ (կաշի, բուրդ, կանեփ և այլն) մթերելու շրջաններ:

դ) Անթույլատրելի համարելով առանց գործը նախա-

պատրաստելու և առանց Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի գիտության փունկցիոնալ սխեմ մտցնել տեքստիլ արդյունաբերության մեջ, առաջարկել Թեթև Արդյունաբերության Ժողկոմատին՝ պայմաններ նախապատրաստել 1933 թվականի սկզբին այդ սխեմն ամենուրեք մտցնելու համար։

6· ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ՝

Մետաղե իրերի վորակի համար պայքար մղելու նպատակով Ծանր Արդյունաբերության Ժողկոմատին կից ստեղծել ծանր արդյունաբերության պատրաստած լայն գործածման մետաղե իրերի վորակի բյուրո՝ մասնակցությամբ ՀԱՄԿԽ-ի, Ցենտրոսայուզի և ԲԳՏ-ի։

7· ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝

ա) Առաջարկել Արհեստագործական Կոոպերացիայի Համամիութենական Խորհրդին՝ ընդարձակել արտելների մանրածախ առևտուրը, մանավանդ գյուղում ավելացնելով լայն սպառման ապրանքների՝ առավելապես գյուղացիական տեսակների, անմիջական վաճառումը սպառողին։

բ) Չկոոպերացված տնայնագործի արտադրանքն ընդգրկելու և նրան ավելի լավ սպասարկելու նպատակով առաջարկել Արհեստագործական Կոոպերացիայի Համամիութենական Խորհրդին՝ արհեստագործական կոոպերացիայի վաճառահանող ու սպառող ձեռնարկությունների և խանութների միջոցով ծավալել պատրաստի իրերի գնումը, հումքի և կիսաֆաբրիկատի հայթայթումը չկոոպերացված տնայնագործին և, պայմանագրական հիմունքներով, հումքի ու կիսաֆաբրիկատի հանձնումը տնայնագործին՝ վերամշակելու համար։

գ) Առաջարկել Թեթև Արդյունաբերության Ժողկոմատին, Ծանր Արդյունաբերության Ժողկոմատին և Մատժողկոմատին՝ լրիվ կատարել Ժողկոմխորհի հաստատած այն պլանը, վորի համաձայն գործարանների վարչությունները իրենց արտադրության մնացորդները, խոտանը և ուտիլն անմիջականորեն պետք է վաճառեն արհեստագործական կոոպերացիային, արտելներին, արտելների միություններին։

8· Ապրանքի վորակի համար պայքար մղելու նպատակով մտցնել լայն սպառման ապրանքների պարտադիր դրոշմումը թե՛ արդյունաբերական և թե՛ արհեստագործական կոոպերացիայի գծով։



9· Առաջարկել Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդին՝ մի ամսում քննել և հաստատել՝

ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ՝

ա) 1932 և 1933 թվականների ծրագրի կատարումը հումքով, վառելանյութով և սարքավորումով ապահովելու պլանը։

բ) Ծանր Արդյունաբերության Ժողկոմատի սիստեմում թեթև արդյունաբերության համար մեքենաշինական բազա ստեղծելու պլանը։

գ) Ծանր Արդյունաբերության Ժողկոմատի սիստեմում նորոգման բազա և մեքենաշինության պահեստի մասերի ու դետալների արտադրություն ստեղծելու պլանը։

դ) Թեթև արդյունաբերության բանվորների բնակարանային շինարարությունն ընդարձակելու և գոյություն ունեցող բնակարանային փոնդը նորոգելու ծրագիրը։

ե) Քաղաքամերձ և գործարաններին կից տնտեսությունների ծավալման պլանը, ինչպես և ինքնամթերումների պլանը՝ բանմատակարարումը բարելավելու նպատակով։

զ) Թեթև արդյունաբերության համար տեխնիկական կադրեր ստեղծելու պլանը։

է) Քննել ապակեղենի ու հախճապակու արդյունաբերությունը ծավալելու պլանը։

ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ՝

ա) 1933 թվականին լայն սպառման ապրանքների արտադրությունը գունավոր մետաղներով ապահովելու պլանը։

բ) Լայն սպառման ապրանքների արտադրության մեջ աշխատող բանվորների և վարչական-տեխնիկական կազմի կենցաղային պայմաններն ապահովելու պլանը։

ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝

ա) 1933 թվականին արհեստագործական կոոպերացիային դեֆիցիտային հումք հայթայթելու պլանը։

բ) Ձեռնարկումներ արտադրանքի վորակը բարելավելու համար։

գ) Ձեռնարկումներ տնայնագործների նյութական ու կենցաղային պայմանները բարելավելու համար։

Կենտկոմի պլենումը մատնանշում է, որ կուսակցությունը միանգամայն ճիշտ կերպով և ժամանակին բևեռել է իր ուշադրությունը լայն սպառման առարկաների արտադրության ուժեղ ծավալման վրա: Քաղաքական այդ կարևորագույն խնդրի դրվելը նախապատրաստվել է յերկրի ինդուստրացման և տնտեսական անկախության նկատմամբ կուսակցության բռնած հիմնական գծի ամբողջ ընթացքում և մանավանդ ծանր ինդուստրիայի վերականգնման ու տեխնիկական վերակառուցման ասպարեզում մեր ձեռք բերած խոշորագույն հաջողություններով:

Կուսակցությունը՝ ջախջախելով հակահեղափոխական տրոցկիզմը, մերկացնելով աջ օպորտունիստների հակալենինյան կուլակային էությունը, իր լենինյան Կենտկոմի ղեկավարությամբ, բուն բոլշևիկյան տեմպով, ծավալեց ծանր արդյունաբերության վերականգնումն ու վերակառուցումը, արդեն վճռական հաջողություններ ձեռք բերելով ծանր ինդուստրիայի ասպարեզում: Դրանով իսկ կուսակցությունը հաստատուն բազա ստեղծեց մասսայական սպառման առարկաներ արտադրող ճյուղերն էլ ավելի զարգացնելու և բարձրացնելու համար և համապատասխան պայմաններ ստեղծեց լայն սպառման առարկաների արտադրության մասին կուսակցության տված դիրեկտիվները լրիվ ու անպայման կատարելու համար:

Ընդգծելով լայն սպառման առարկաների արտադրության ընդարձակման քաղաքական հսկայական նշանակությունը քաղաքի ու գյուղի զոդումն ամրացնելու համար, ՀամԿ(բ)Կ-ի Կենտկոմն առաջարկում է կուսակցական, կոմյերիտական, արհմիութենական և խորհրդային բոլոր կազմակերպություններին՝ ամեն կերպ օժանդակել տնտեսական կազմակերպություններին և արհեստագործական կոոպերացիային՝ ծավալելու լայն սպառման առարկաների արտադրությունը և ամեն ամիս ստուգել, թե ինչ չափով են կատարվում Կենտկոմի ու Ժողկոմխորհի ցուցումները և ինչ ընթացք ունի լայն սպառման առարկաների արտադրությունը:

---



# ՍԵՎ ՄԵՏԱՂԱՁՈՒԼՄԱՆ ՄԱՍԻՆ

## (ՀԱՄ Կ(Բ)Կ-Ի ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ 1932 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԲԱՆԱՁԵՎԸ ԸՆԿ. ՕՐՋՈՆԻԿԻՁԵՅԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ՅԵՎ ԸՆԿ. ՌՈՒԶՈՒՏԱԿԻ ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ)

1. Կուսակցության 16-րդ համագումարը մատնանշեց սև մետաղաձուլման հետ մնալը և խնդիր դրեց ուժեղացնել այդ ճյուղի ծավալումը: 16-րդ համագումարից հետո անցած կարճ ժամանակամիջոցում խոշոր հաջողություններ ենք ձեռք բերել սև մետաղաձուլման զարգացման մեջ:

Առաջավոր տեխնիկայի հիմքի վրա ստեղծվել է կոքսի նոր արդյունաբերություն (արդեն բանում է 17 նոր մարտկոց ու կոքսի հնոց՝ չորս միլլիոն տոնն արտադրականությամբ և գործարկման նախօրյակին են գտնվում վեց մարտկոց, յոթ միլլիոն տոնն կոքսի արտադրականությամբ):

Հարավի գործող գործարաններում լրիվին վերանորոգված է օդամուղ տնտեսությունը: Վերակառուցվեցին մի շարք հալոցներ և ավելացվեց նրանց արտադրականությունը: Կառուցվեցին ու գործարկվեցին նոր հզոր հալոցներ Մակեյեվկի գործարանում, Ձերժինսկու և Կերչի գործարաններում: Գործարկման նախօրյակին են գտնվում Վորոշիլովի անվան գործարանի հզորագույն հալոցները: Շատ առաջ է գնացել հարավի գործող գործարանների հիմնական վերակառուցումը՝ նոր մարտենյան ցեխի և խորհրդային յերկրորդ բլյումինգի (առաջինի կարողությամբ) կառուցումը Ձերժինսկում:

Կենտրոնում գործարկման նախօրյակին է գտնվում մի նոր, մեծ հալոց Կոսոգորսկի գործարանում, մարտենյան նոր հնոցներ Վիկսունի գործարանում, արմատական վերակառուցման է յենթարկվում «Կրասնի Ակտյաբր» գործարանը:

Ուրալում սկսվել է մի շարք գործարանների վերակառուցումը և նրանց փոխադրումը բարձրորակ մետաղի արտադրության:

Լայն ճակատով ծավալվել է նոր մետաղաձուլարանների շինարարությունը Մագնիտոգորսկի, Կուզնեցկի, Նովո-Տագիլի, Զապորոժյեյի «Նովստալ» գործարանի, Կրիվորո-

ժակի, Տուլայի և Լիպեցկի գործարանների վերակառուցումը: Արդեն գործարկված են Մագնիտոգորսկի և Ստալինսկի առաջին հալոցները, սարքավորվում են հալոցները Ազովստալում, Կրիվորոժսկում, Զապորոժյեյի «Նովստալ» գործարանում, Կրիվորոժսկի, Տուլայի և Լիպեցկի գործարաններում:

Սկսեցին ձեռնարկությունների շարքը մտնել մարտենյան հնոցները, գործարկման նախօրյակին է գտնվում Կուզնեցկի գործարանի բլյումինգը և ռելսի ու յերկաթագերանի գլոցյահը, բլյումինգի մարտենյան ցեխ է կազմակերպվում Մագնիտոգորսկում: Գործարկման նախօրյակին են գտնվում գործիքային պողպատի և ֆերոձուլվածքի ցեխերը Զապորոժյեյի պողպատի գործարանում:

Այդ ամբողջ աշխատանքի շնորհիվ կուսակցության 16-րդ համագումարից հետո անցած ժամանակաշրջանում, գնելի ուժեղացման դաշընթաց, գործարկվեց 12 նոր հալոց, վորոնցից ինը 1932 թվականին. դրանցից վեցը գերհզոր հալոցներ:

Գործարկվեց քսան նոր մարտենյան հնոց, կառուցվում և սարքավորվում է 16 հալոց, տասնյակ նոր մարտենյան հընոցներ, չորս հզորագույն բլյումինգ: Բացի դրանից, կառուցվում են մի շարք նոր խողովակաչեն ցեխեր և գործարաններ (Մարիուպոլ, Տագանրոգ, Լիբկնեխտի անվ. գործարան, Վիկսունի գործ., Ուրալի առաջին գործարանը, Նիկոպոլի գործարանը):

Խոշոր մասշտաբով ստեղծվում է բարձրորակ պողպատների արտադրությունը մեքենաշինության նոր ճյուղերի համար (ավտոտրակտորային, ավիացիոն, գործիքային և այլն): Կանոնավորված է խրոմոնիկելի, վոլֆրամի, խրոմատային պողպատների մասսայական արտադրությունը, արագահատ պողպատի, չժանգոտող պողպատի, հրակայուն և թթվակայուն պողպատների, գնդակավոր առանցքակալների, հակամագնիսային պողպատների, տրանսֆորմատորային ու դինամոմեքենային յերկաթի և զանազան գործիքային պողպատների, կալիբրային մետաղի մասսայական արտադրությունը: 32 թվականին բարձրորակ պողպատի արտադրությունը կազմելու յե 530 հազար տոնն՝ հանդեպ 1931 թվականի 330.000 տոննի և 1928—29 տարվա 100 հազար տոննի: Զելյաբինսկի գործարանում կազմակերպված է ֆերոձուլվածքների արտա-



դրությունը, վորանք առաջ բացառապես ներմուծվում եյին արտասահմանից:

Սև մետաղաձուլման արտադրանքը 1932 թ. 8 ամսում ավելացավ 22 տոկոսով՝ համեմատած 1931 թվականի համապատասխան շրջանի հետ, թուջը՝ 28 տոկոսով, պողպատը՝ 8 տոկոսով, մամլած յերկաթը՝ 9 տոկոսով:

2. Սակայն վերև մատնանշված հաջողությունները միանգամայն անբավարար են՝ համեմատած այն խնդիրների հետ, վորոնք դրված են սև մետաղաձուլման ասպարեզում ԽՍՀՄ-ի ամբողջ տնտեսության առմամբ: 17-րդ կոնֆերանսի հաստատած պլանը, վորի համաձայն 1932 թ. արտադրվելու յե 9 միլ. տոնն թուջ, 9,5 միլ. տոնն պողպատ և 6 միլլիոն տոնն մամլած յերկաթ, չի կատարվում: Սև մետաղաձուլումը շարունակում է հետ մնալ յերկրի արտադրական ուժերի զարգացման ընդհանուր մակարդակից, սահմանափակելով ամբողջ մեքենաշինության զարգացումը և դանդաղեցնելով տրանսպորտի ու գյուղատնտեսության վերակառուցումն ու նոր շինարարության տեմպը: Անբավարար են պողպատահալ և մամլած յերկաթի ցեխերի գործունեյության արդյունքները: Անպայման անհանդուրժելի յեն այն ճեղքվածքները, վորոնք տեղի յեն ունեցել սև մետաղաձուլման ասպարեզում՝ պլանի վորակական ցուցանիշների ամբողջ գծով:

3. Կենտկոմի պլենումը գտնում է, վոր ամառվա ամիսներին սև մետաղաձուլման աշխատանքի վատացման գլխավոր պատճառներն են՝ գործարանի վարչությունների, մետաղարդյունաբերության գլխավոր վարչության և Ծանր Արդյունաբերության ժողկոմատի միանգամայն անբավարար տնտեսական, վարչական ու տեխնիկական ղեկավարությունը, կազմակերպություններ, վորոնք չեն կարողացել վերացնել ձևական ղեկավարման տարրերը, կազմակերպել կատարման իրական ստուգում, վորոնք չեն կարողացել պատշաճ չափով կազմակերպել արտադրությունն ու աշխատանքը, հակադրել գոյություն ունեցող դժվարություններին բոլշևիկյան գրոհը և կազմակերպվածությունը, ամառվա ամիսներին ամրացնել և է՛լ ավելի զարգացնել արտադրության այն մակարդակը, վորը ձեռք եր բերված մայիսին, յերբ թուջի ձուլումը հասել եր որական 19 հազար տոննի և պողպատի ձուլումը՝ 18 հազար տոննի:

Դրա հետ միասին Կենտկոմը մատնանշում է կուսակցական ու արհմիութենական աշխատանքի թուլանալը սև մետաղաձուլման գործարաններում, վորի արդյունքը յեղավ աշխատանքային կարգապահության ընկնելը, սոցմրցման ու հարվածայնության թուլանալը, ուշադրության նվազումը դեպի բանվորների ամենօրյա կենցաղային կարիքները: Ամառվա ամիսներին սև մետաղաձուլման պլանի թերակատարման մեջ վորոշ դեր խաղացին նաև տրանսպորտային դժվարությունները, վորոնք արտահայտվեցին հանքի, ածխի, կրաքարի, հրակայուն նյութերի և շինանյութերի փոխադրության խափանումներով:

4· Երկրի առջև դրված խնդիրները՝ գյուղատնտեսության տեխնիկական զինավորումը, տրանսպորտի արագ զարգացումն ու վերասարքավորումը, յերկրի պաշտպանության ամրացումը, մեքենաշինական արդյունաբերության զարգացումը, չեն կարող լուծվել առանց խոշոր չափով ավելացնելու մետաղի ձուլումն ու ձևավորումը և առանց նոր գործարանների ու ցեխերի շինարարության: Մետաղաձուլական գործարանների աշխատանքն արագորեն բարելավելու և մետաղի արտադրությունն ավելացնելու նպատակով, ինչպես և 1933 թվականի արտադրական շինարարության ծրագիրն անպայման կատարելու համար, Կենտկոմի պլենումը վորոշում է՝

1· Առաջարկել Ծանր Արդյունաբերության Ժողկոմատին՝ կենտրոնացնել ուշադրությունն աշխատանքի ու արտադրության կազմակերպման մեջ գոյություն ունեցող թերությունները վերացնելու գործի վրա, մասնավորապես՝

ա) ավելի մեծ ուշադրություն նվիրել հին գործարանների աշխատանքին և գոյություն ունեցող սարքավորման օգտագործմանը·

բ) բոլոր մյուս աշխատանքների նկատմամբ առավելություն տալ այն աշխատանքին, վորի նպատակն է ռացիոնալացնել հին ագրեգատները և նրանց սպասարկող սարքավորումը, վերացնել գործարանների նեղ տեղերը, հասցնելով առավելագույն արտադրականության գործող սարքավորումը, վորը ներկայումս ունի զգալի չօգտագործված ռեզերվներ: 1933 թվականին, ինչպես և 1934 թվականին ավարտել հանքահորերի աշխատանքային հիմնական այն պրոցեսների



մեքենայացումը, վորոնք շատ աշխատանք են պահանջում, ինչպես և ներքին գործարանային տրանսպորտի մեքենայացումը·

գ) հատուկ ուշադրություն նվիրել պողպատաձուլ, մամլած յերկաթի ցեխերին, նկատի ունենալով նրանց խիստ հետ մնալը, ուշադրություն նվիրել նրանց կադրեր, վառելանյութ, տեխնիկական նյութեր և պահեստի մասեր հայթայթելու գործին, ժամանակին նորոգել և կատարել մասնակի այնպիսի վերակառուցումներ, վորոնք կարող են արագ և զգալի արդյունքներ տալ·

դ) ուժեղացնելով ագրեգատների աշխատանքի տեխնիկական ղեկավարումը, ընդարձակելով մասնավորապես հնոցային պողպատահալների և Փալսովշչիկների և այլ մասնագետների սիստեմատիկ վորակյալ ու կենդանի հրահանգումը, մտցնելով գրավոր հրահանգներ տեխնիկական պրոցեսը կատարելու համար, ծավալելով վորակյալ բանվորների ու տեխնիկական կադրի պատրաստումն ու վերապատրաստումը կարճատև դասընթացներում՝ առանց կտրելու նրանց արտադրությունից·

ե) մոբիլիզացիայի յենթարկել աշխատողների ուշադրությունը՝ պայքարելու բազմաթիվ պատահարների դեմ, վորոնք դարձել են արտադրության չարիքը, վորոնք խոշոր չափով նվազեցնում են արտադրանքը, սահմանելով նախազգուշական նորոգումների պլաններ, ստեղծելով պահեստի մասերի պարկ, տեխնիկական նյութերի մշտական պահեստ, ամենից ավելի ուժեղացնելով աշխատանքային կարգապահությունը, բարելավելով ագրեգատների վրա սահմանված հսկողությունը և նրանց խնամքը·

զ) սիստեմատիկ և պլանաչափ պայքար մղել՝ ամենակարճ ժամանակամիջոցում տիրապետելու նոր շինարարությունների և վերակառուցվող գործարանների նոր ագրեգատների աշխատանքին, պահանջելով, վոր նրանց շահագործման բոլոր կարիքներն անպայման բավարարվեն լրիվ չափով·

է) ժամանակին և բավարար թվով պատրաստել վորակյալ բանվորներ ու ինժեներներ նոր ագրեգատների համար·

ը) առաջարկել գործարանների դիրեկտորներին՝ գործնական ու կոնկրետ հիմքերի վրա դնել ձեռնարկության

ղեկավարումը, ավելի լավ ուսումնասիրելով իրենց հանձնըված գործի տեխնիկան, ավելի մոտից ծանոթանալով ցեխերի ու ագրեգատների աշխատանքին, օպերատիվ օգնություն ցույց տալով նրանց ամենօրյա աշխատանքին.

թ) Կենտկոմի վորոշման համաձայն, տեխնիկական նորմավորման վերակառուցումը դարձնել իրական գործիք աշխատանքի արտադրականությունն ավելացնելու և բանվորների վորակավորումը բարձրացնելու համար.

ժ) Հատուկ ուշադրություն նվիրել, ինժեներա-տեխնիկական կադրերին, վորոնց թվում նաև ձեռնարկության միջակ հրամկազմին, ավագ բանվորներին ու վարպետներին, վորոնց վրա յե ընկած ագրեգատների աշխատանքի անմիջական ղեկավարումը և նրանց խնամքը.

ժա) կրահանքերը, դոլոմիտի հանքերը, հրակայուն նյութերի և մագնեզիտի հանքերը, փայտի, ածխի արտադրությունը և փոխադրումը, ինչպես և հանքարդյունաբերությունը, մատակարարման նորմաների տեսակետից հավասարեցնել ածխարդյունաբերությանը.

ժբ) սև մետաղաձուլման բնակշինարարության 1933 թվականի ծրագիրն ընդունել 1800 հազար քառ. մետր:

2. Հանձնարարել Կենտկոմի Կազմբյուրոյին՝ ձեռնարկումներ մշակել ուժեղացնելու կուլտուրական հիմնարկների աշխատանքը, ինչպես և ծավալելու նրանց ցանցը (դպրոցներ, գրադարաններ, կինոներ, ակումբներ և այլն):

3. Առաջարկել Հաղորդակցության ճանապարհների Ժողկոմատին՝ ապահովել բեռների անխափան փոխադրումը մետաղաձուլման համար (հանք, ֆլյուս, կավ, ավազ, կվարցիտ, հրակայուն նյութեր, կոքս, վառելանյութ, պատրաստի իրեր), յեռամսյակային, ամսական և օրական վորոշ պլանների համաձայն, համարելով այդ փոխադրումները կարևորագույն ու առաջնակարգ՝ փոխադրությունների սիստեմում: Գոյություն ունեցող ինքնաթափ բոլոր վագոնները կենտրոնացնել բացառապես մետաղաձուլման համար կատարվող փոխադրումների վրա:

4 Մասնանշելով անտառանյութի չափազանց անբավարար մատակարարումն Ուրալի գործարաններին, առաջարկել Ծանր Արդյունաբերության Ժողկոմատին և Ուրալի մարզկոմին՝ վճռական կերպով կատարել կառավարության ըն-



դունած բոլոր ձեռնարկումները և ամենաուշը մինչև նոյեմբերի մեկն ապահովել Ուրալի մետաղաձուլարանները փայտի ու փայտածխի յերկու ամսվա պաշարով: Անհրաժեշտ համարել ածուխ պատրաստող անտառարդյունաբերական տնտեսությունները հանել Անտառժողկոմատի տնօրինությունից և հանձնել «Վոստոկստալին»:

5. Մասնանշելով վորակավոր մետաղաձուլման առաջատար դերը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար տեխնիկական նորագույն բազա ստեղծելու գործում, պլենումն անհրաժեշտ է համարում մոբիլիզացիայի յենթարկել կուսակցության ու ամբողջ յերկրի ուշադրությունը՝ արագորեն ավարտելու բարձրորակ պողպատի հետևյալ գործարանների շինարարությունն ու վերակառուցումը՝ Զապորոժստալը, Էլեկտրոստալը, Ֆերոձուլվածքների Չելյաբինսկի գործարանը, Զլատոուստի «Կրասնի Ակտյաբր» գործարանը, Իլյիչի անվան գործարանը և Զուևի գործարանը, ինչպես և վերակառուցելու Բակալի հանքերը, և կառուցելու Ուֆայի նիկելի գործարանը:

Առաջարկել Ծանր Արդյունաբերության Ժողկոմատին՝ արագացնել կալիբրային ցեխերի շինարարությունը Նադեժդինսկի գործարանում և «Սերպ ի Մոլոտ» գործարանում:

6. Միանգամայն անբավարար համարելով այն բեկումը, վորը տեղի յե ունեցել սև մետաղաձուլման համար սարքավորում արտադրելու գործում, առաջարկել Ծանր Արդյունաբերության Ժողկոմատին՝

ա) ստեղծել մետալուրգիական սարքավորումը նախագծող ուժեղ կազմակերպություն.

բ) 1933 թվի սկզբից Ուրալի մեքենաշինական գործարանում և Նովո-Կրամատորսկայում ձեռնարկել մետալուրգիական սարքավորման արտադրությունը, ապահովելով նրանց արտադրական կարողության արագ ծավալումը, չծանրաբեռնելով նրանց կողմնակի պատվերներով՝ առանց ժողկոմի թույլտվության:

Նախքան մետալուրգիական սարքավորման մեքենաշինական գործարանների լրիվ ծավալումն, անխախտ ամրացնել ընդհանուր տրանսպորտային մեքենաշինարարության, նաև Կոթաստուրբինի կարևորագույն գործարանների մասնակցությունը մետալուրգիական սարքավորման արտադրությանը:

7. Մասնագիտական, ճարտարագիտական՝ հատուկ ուշադրություն դարձնել և մետալուրգիայի ժամանակին նախապատրաստման վրա:

Մոտակա տարիներում և մետալուրգիայի վրա դրված խնդիրները, այն է՝ վողջ տեխնիկական բազայի արմատական վերակառուցումը, որոնց սեզոնով աշխատում խոշորագույն գործարանների ու ագրեգատների գործարկումը, միլիոնավոր տոնների հասնող չուգունի ու պողպատի արտադրանքի անընդհատ վերելքը, այնչափ խոշոր, բարդ և պատասխանատու խնդիրներ են, վոր պահանջում են վոչ միայն բոլոր աշխատողների հարվածային աշխատանք, այլև խոշոր օժանդակություն նրանց՝ վողջ կուսակցության կողմից:

ԿԿ պլենումը պարտավորեցնում է ոգնել և մետալուրգիային (ժամանակին և լրիվ մատակարարել նրան նյութերով, մարդով, ֆինանսավորումով, տրանսպորտով և կադրերով), մետաղագործ բանվորների մեջ սոցիալիստական ենթուզիազմի մարտիկներ, վորոնք պետք է լինեն պլանների կատարման համար պայքարի առաջավոր ավանգարդ ...ության նմուշներ:

---

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ. Սրբագրեց՝ Ա. Տեր-Ծերունյան

Գլավլիտ 7673 (բ) Հրատ. 39 Պատվեր 3199 Տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 17 նոյեմբերի 1932 թ.
Ստորագրված է տպելու 22 դեկտեմբերի 1932 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0927399

Ю3 1 / 3053

Գին 20 կ. (1 ռ.)

Резолюции сентябрьского пленума ЦКВКП (б)

Издательство Ц К К П (б) А
Партиздат. 1932 Эривань